ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
0064, Երևան, Րաֆֆու 57
Raffy 57.Yerevan
Ереван, ул. Раффи 57
(374 10) 74 72 46 (374 91) 43 10 99
«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС «МХИТАР СЕБАСТАЦИ» Министерства образования и науки РА
https://www.facebook.com/mxitaar.sebastaci?fref=ts info@mskh.am www.mskh.am

19-12-877 12.12.2019թ.

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ
ԳՈՌ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հարգելի պարոն Գասպարյան.

Կրթահամալիրը դասագրքերի շրջանառու հիմնադրամում իր հաշվին ունի 5 մլն 523 հզր 482.78 դրամ և 14 հզր 963.23 ԱՄՆ դոլար: Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցներով տպագրվում և դպրոցներին տրամադրվում են պետական կրթական ծրագրի նյութերը, ուսումնական առարկաների դասագրքերը: Իսկ կրթահամալիրում արդեն 30 տարի իրականացնում է հեղինակային մանկավարժություն: Կրթական ծրագիրը կազմակերպվում է ուսուցման թվային միջոցներով, ուսումնական բլոգներով: Որևէ դասագիրք՝ ո՛չ պետական, ո՛չ հեղինակային կրթական ծրագրով ստեղծված, չի կարող լինել դասընթացի միակ ուսումնական ռեսուրսը: Կրթահամալիրի դասավանդողների ջանքերով ստեղծվել-ստեղծվում են տասնյակ ուսումնական էլեկտրոնային փաթեթներ, թարգմանություններ, որոնք հասանելի են դասավանդողների բլոգներում, «Տիգրան Հայրապետյան» էլեկտրոնային գրադարանում, որպես ուսումնական նյութեր՝ հաջողությամբ օգտագործվում են դասավանդողների և սովորողների կողմից: Պետական կրթական ծրագրով հրապարակվող դասագրքերից կրթահամալիրը ձեռք է բերում միայն գրադարանային ֆոնդի համար գրականություն (մինչև 20 օրինակ): Կրթահամալիրին շրջանառու հիմնադրամում առկա միջոցներն անհրաժեշտ են՝

- ուսուցման թվային միջավայրը բարելավելու համար, որը կրթահամալիրի դպրոցներում ստեղծվել է մեր ոչ բյուջետային միջոցներով և հետևողական թարմացվում է,

- մեր ռեսուրս կենտրոն-գրադարանի, համար, իր 7 ընթերցարաններով, նոր հրատարակված գրականություն, նոր տեխնիկական միջոցներ ձեռք բերելու համար:

Խնդրում ենք ԴՇՀ-ում կրթահամալիրի միջոցները հեղինակային կրթական ծրագրով ուսումնական նյութերի-միջոցների ձեռքբերման համար օգտագործելու հնարավորություն ընձեռել:

Համեցեք կրթահամալիր այս օրերին, ծանոթացեք մեր իրականությանը:

***ՀԱՐԳԱՆՔՈՎ՝***

***ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝*** ***Ա. ԲԼԵՅԱՆ***

info@mskh.am